# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

# ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏ

## ՈՐՈՇՈՒՄ

<< 19 >> հունվար 2017թ N 3

ք. Եղեգնաձոր

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՏԱԿ ԳՏՆՎՈՂ «ԵՂԵԳՆԱՁՈՐԻ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԴԻՐ ՏՆՕՐԵՆԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 20-Ի ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով ՀՀ Վայոց ձորի մարզպետի 2010 թվականի սեպտեմբերի 30-ի « Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզպետարանի ենթակայության տակ գտնվող պետական ոչ առևտրային կազմակերպությունների և հարյուր տոկոս՝ պետությանը սեփականության իրավունքով պատկանող բաժնեմաս ունեցող փակ բաժնետիրական ընկերությունների գործադիր մարմինների ընտրության (նշանակման) մրցութային հանձնաժողովի ձևավորման կարգը հաստատելու մասին» N85-Ն որոշմամբ հաստատված N1 հավելվածի 5-րդ և 8-րդ կետերով, Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի «Հայաստանի Հանրապետության մարզերում պետական կառավարման մասին» ՆՀ-728 հրամանագրի 1.6-րդ կետով

*ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝*

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզպետարանի ենթակայության տակ գտնվող <<Եղեգնաձորի Երաժշտական դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության գործադիր տնօրենի ընտրության 2017 թվականի հունվարի 20-ի մրցութային հանձնաժողովի կազմը՝ համաձայն հավելվածի:

2. Հանձնաժողովի գործունեությունը դադարեցվում է Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզպետի 2010 թվականի սեպտեմբերի 30-ի N 85-Ն որոշմամբ հաստատված N1 հավելվածի 20-րդ կետի համաձայն:

Հ.ՄԱՐԳՍՅԱՆ

Հավելված
ՀՀ Վայոց ձորի մարզպետի
2017 թվականի հունվարի 19-ի
թիվ 3 որոշման

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզպետարանի ենթակայության տակ գտնվող << Եղեգնաձորի երաժշտական դպրոց >> պետական ոչ առևտրային կազմակերպության գործադիր տնօրենի ընտրության մրցութային հանձնաժողովի կազմը

Հանձնաժողովի նախագահ՝

| | |
|---|---|
| Ղազարյան Արփիար | ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի աշխատակազմի կրթ., մշակ. և սպորտի վարչ.պետ |

Հանձնաժողովի քարտուղար՝

| | |
|---|---|
| Մաղաքյան Նարինե | ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի աշխատակազմի իրավաբանական բաժնի պետ |

Անդամներ՝

| | |
|---|---|
| Հարությունյան Մելսիկ | ՀՀ Վայոց ձորի մարզպետի տեղակալ |
| Կարապետյան Վասակ | ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի աշխատակազմի ներքին աուդիտի բաժնի պետ |
| Մանուկյան Մարինե | ՀՀ Վայոց ձորի մարզի «Եղեգնաձորի երաժշտական դպրոց» ՊՈԱԿ-ի ուս. Գծով տեղակալ |
| Հարությունյան Անդրանիկ | ՀՀ Վայոց ձորի մարզի «Եղեգնաձորի Մշակույթի կենտրոն» ՊՈԱԿ-ի «Մեղեդի» ստուդիայի գեղ. ղեկավար |
| Մովսիսյան Կարինե | «Երիտասարդ սերունդ» ՀԿ նախագահ |

**ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Կ.ՍԱՀԱԿՅԱՆ**